ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԳՅՈՒԼԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՈՐՈՇՈՒՄ

«14» մարտի 2024 թվականի N 23 -Ա

ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ 06-057-0142-0001 ԾԱԾԿԱԳՐԻ ՏԱԿ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼԻՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՎԱՃԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով Մկրտիչ Հովսեփի Մանուկյանի լիազորված անձ՝ Գևորգ Արմենի Սինդոյանի դիմումը, գրանցամատյան թիվ 210 համայնքային սեփականությանը պատկանող հողային տարածքի վարձակալության իրավունքի տրամադրման պայմանագիրը, անշարժ գույքի վարձակալության իրավունքի գրանցման թիվ 03022014-06-0020 վկայականը կազմված 2014 թվականի փետրվարի 3-ին,ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի թիվ 188-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին մասով, ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 09-ի թիվ 839-Ն որոշումը , ՀՀ Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ կետով, 60-րդ հոդվածի և 66-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ կետերով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 21-րդ կետով,ՀՀ Քաղաքաշինության մասին ՀՀ օրենքով, ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 627 հոդվածով, ՀՀ կառավարության պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի օտարման, կառուցապատման իրավունքի և օգտագործման տրամադրման կարգը հաստատելու մասին 2001 թվականի ապրիլի 12-ի թիվ 286 որոշմամբ՝ ավագանին որոշում է՝

1.Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Գյուլագարակ համայնքի Կուրթան գյուղում գտնվող՝ Մկրտիչ Մանուկյանի վարձակալության իրավունքով 25 տարի ժամկետով տրամադրված հողամասը, ՀՀ կառավարության 09,06,2005թ թիվ 839-Ն որոշմամբ սեփականության իրավունքով փոխանցված է համայնքին որպես Գյուղատնտեսական վարելահող 06-057-0142-0001 ծածկագրով, որը մասնավորեցման ենթակա հողամաս է, ընդգրկված չէ ՀՀ Հողայի օրոնսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, ուստի առաջնորդվելով վերը նշված օրենքներով գյուղատնտեսական նպատակային նշանակության, վարելահող գործառնական նշանակության 06-057-0142-0001 ծածկագրից 0,9915 հա հողամասը 2500000 /երկու միլիոն հինգ հարյուր հազար / ՀՀ դրամ, ուղղակի վաճառքի ձևով օտարել վարձակալ Մկրտիչ Մանուկյանին:

2.Մկրտիչ Մանուկյանի հետ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կնքել հողամասն ուղղակի վաճառքով վաճառելու առուվաճառքի պայմանագիր:

3.Իրավունքը ենթակա է պետական գրանցման Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ավագանու անդամներ-	Կողմ (7)	Դեմ (0)	Ձեռնպահ (0)	Ծանոթություն
Վարդանյան Խաչիկ		—	—	—
Օհանյան Ռուսլան		—	—	—
Սարգսյան Աիդա		—	—	—
Նալբանդյան Նարեկ		—	—	—
Մուրադյան Դավիթ		—	—	—
Պառավյան Գոհար		—	—	—
Այվազյան Սերյոժա		—	—	—
Գրիգորյան Արսեն	—	—		
Այվազյան Վրույր	—	—		—
Գևորգյան Համլետ	—	—		—
Քալաշյան Վարսենիկ	—	—		—
Թորոսյան Հրայր	—	—		—
Տոնոյան Արտյոմ	—	—		—
Գրիգորյան Թամարա	—	—		—
Սարգսյան Ալիկ	—	—		—

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԽԱՉԻԿ ՎԱՐԴԱՆՅԱՆ